ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեության արդյունքային ցուցանիշների համալրման եվ 2021-22 ուստարվա գործունեության արդյունքների

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

/ԳԽ, 26.11.22թ./

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմն իր վերլուծություններով մասնաճյուղի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է: ԳԱՑ-ում ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների արդյունքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Այն նպաստում է ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը, այն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի **արդյունքները չափելու** և վերլուծելու համար:

Այս վերլուծության մեջ ներկայացված է Մասնաճյուղի 2017-2022թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների լրակազմը: Այն ներկայացնում է մասնաճյուղի վերջին 5 տարիների գրանցած արդյունքները և դրանց դինամիկան, դրանք փաստում են մասնաճյուղի ձեռքբերումների, նաև խնդիրների մասին: ԳԱՑ-ում յուրաքանչյուր ցուցանիշի համար գրված է վերլուծություն, որում հնարավորինս ներկայացված են ձեռքբերված արդյունքները, նրանց հիմնավորումները, իսկ խնդիրների դեպքում՝ պատճառները:

Մասնաճյուղի նոր 2017-2022թթ. գործունեության արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ 2017-2022-ի) լրակազմը տարբերվում է նախորդ ԳԱՑ-երից, որովհետև մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն այն վերանայել է ըստ Մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատման պահանջների: Նոր ռազմավարական ծրագրում կարևորվել են կրթությունը, գիտությունն ու նորարարությունը և հանրային ներգրավումը: Այդ ուղղություններում Մասնաճյուղի նախանշած ձեռքբերումները մանրամասն ներկայացնելու համար վերանայվել և նոր արդյունքներով համալրվել են բոլոր 6 բնագավառները.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորարարություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այս բնագավառների ցուցանիշներում ավելացվել են **4** նոր **ցուցանիշներ** (4.11, 6.1.1, 6.1.2, 6.5) և ավելացվել են **35 նոր արդյունքներ**: Մասնավորապես, ԳԱՑ 2017-2022 -ում ըստ բնագավառների ներառվել են.

1. **Ընդունելություն և համակազմ,** ներառվել է **2 արդյունք՝** նախապատրաստական դասընթացների իրականացման վերաբերյալ,
2. **Ուսումնական գործընթաց,** ներառվել է **4 արդյունք՝** այդ թվում հավատարմագրված կրթական ծրագրերի, հետագայում իրականացվելիք լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ,
3. **Ռեսուրսներ և կառավարում,** ներառվել է **3 արդյունք՝** գիտական գործունեության աջակցման և գիտությանը հատկացվող ծախսերի վերաբերյալ,

4. **Ենթակառուցվածքներ,** ներառվել է **9 արդյունք՝** ուսումնական և վարչական տարածքների արդիականացման, մասնաճյուղի մասնաշենքերի վերակառուցման, լսարանների արդիականացման ծրագրերի վերաբերյալ,
5. **Գիտություն և նորարարություն,** ներառվել է **4 արդյունք՝** միջազգային գիտակրթական թվային հարթակներում ներգրավված, կրթական նորագույն ծրագրերի մասնակցող, գիտահետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թվի վերաբերյալ,
6. **Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն,** ներառվել են ամենաշատ թվով արդյունքներ՝ **13 արդյունքներ,** միջազգային դրամաշնորհային և գիտահետազոտական ինստիտուտների հետ իրականացվող ներքին դրամաշնորհային ծրագրերում ներգրավված դասախոսների և ուսանողների թվի վերաբերյալ, բուհ-գործատու համագործակցության և օտարերկրյա համալսարանների և կազմակերպությունների միջև համագործակցության վերաբերյալ:

ԳԱՑ-ում ավելացվել են նաև **2 նոր բնագավառներ**. որակի կառավարում և հասարակական պատասխանտվություն՝ **6 ցուցանիշներով** և **24 արդյունքներով**:

Որպես 7-րդ բնագավառ դիտարկվել է **Որակի ներքին ապահովումը,** որը ներկայացվել է **3 ցուցանիշի 15 արդյունքներով**.

1. Ցուցանիշ 7.1. Կրթական ծրագրերի որակի ապահովում՝ **5 արդյունքներ,**
2. Ցուցանիշ 7.2. Ուսումնական գործընթացի որակի ապահովում (մասնակցություն շարժունության ծրագրերի)՝ **4 արդյունքներ,**
3. Ցուցանիշ 7.3. Կրթական ծրագրերի որակից ներքին և արտաքին շահակիցների բավարվածության գնահատում՝ **6 արդյունքներ:**

Որպես 8-րդ բնագավառ դիտարկվել է **Հասարակական պատասխանատվությունը,** որը ներկայացվել է **3 ցուցանիշի 9 արդյունքներով**.

1. Ցուցանիշ 8.1. Համագործակցություն՝ **4 արդյունքներ,**
2. Ցուցանիշ 8.2. Արտաքին շահակիցների կարիքներ՝ **2 արդյունք,**
3. Ցուցանիշ 8.3. Լրացուցիչ կրթական ծրագրեր, լրացուցիչ կրթական ծառայություններ, ոչ ֆորմալ կրթության ապահովում՝ **3 արդյունքներ:**

Ներառված նոր արդյունքներից շատերի համար 2021-2022 ուստարվա համար արդեն լրացված են արդյունքներ և հետևաբար նրանք ներառված են 2017-2022թթ.ԳԱՑ-ի մեջ, նշված մյուս արդյունքները կներառվեն հաջորդ տարիներին՝ գրանցված համապատասխան արդյուքների առկայությանը զուգընթաց:

Ներկայացնենք 2021-22 ուստարվա գործունեության ընթացքում Մասնաճյուղի ձեռք բերած **հիմնական արդյունքներն ըստ բնագավառների:**

Բնագավառ 1.Ընդունելություն

1. Այստեղ պետք է նշել, որ 2021թ.-ի **ընդունելության արդյունքները** Մասնաճյուղի համար ընդհանուր առմամբ եղել են գոհացուցիչ (նաև ՀՀ արդյունքների համատեքստում), առկա բակալավրիատ ընդունվել է դիմորդների 80%-ը՝ 192, հեռակա բակալավրատ ընդունվել է դիմորդների 84%-ը՝ 113, մագիստրատուրա՝ 88% (17-ից 15-ը), վճարովի ուսուցման համակարգի 372 տեղից մի մասը մնացել է թափուր (Ցուցանիշներ 1.4, 1.5, 1.6, 1.7):

Ցուցանիշ 1.4	2017	2018	2019	2020	2021
Բակալավրիատ	**168**	**76**	**166**	**212**	**192**
Անվճար	39	39	35	43	**44**
Վճարովի	129	37	131	169	**148**
Մագիստրատուրա	**0**	**0**	**0**	**25**	**15**
Անվճար	0	0	0	0	0
Վճարովի	0	0	0	25	15



2. 2021-22 ուստարում ուսանողական համակազմը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է հիմնականում հեռակա ուսուցման համակարգում: Դա պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների թվի համեմատ ընդունվածների թվի նվազմամբ, նաև բնագիտական ուղղությամբ հեռակա ուսուցման համակարգում 3 և առկա ուսուցմամբ 2 կրթական ծրագրերով ընդունելություն չկազմակերպելու փաստով: 2021-22 ուստարում մասնաճյուղում սովորել է 1186 ուսանող, որից 562-ը բակալավրի առկա ուսուցման իսկ 611-ը՝ հեռակա ուսուցման համակարգում, 13-ը՝ մագիստրատուրայում:



3. Պետք է նշել, որ վերջին տարիներին Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգ են դիմում նաև ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմությամբ շրջանավարտները, 2021թ.-ին դիմել են 29-ը (Ցուցանիշ 1.15):

<u>Բնագավառ 2.</u> Ուսումնական գործընթաց

4. 2021-2022 ուստարում բակալավրիատի **<u>ամփոփիչ ատեստավորմանը</u>** մասնակցել են թվով **234** ուսանողներ (79-ը՝ առկա ուսուցման համակարգում և 155-ը՝ հեռակա ուսուցման համակարգում) և մագիստրատուրայի՝ 24 ուսանողներ: Ամփոփիչ ատեստավորումից դրական են գնահատվել առկա ուսուցման շրջանավարտների 100%-ը, հեռակա ուսուցման բակալավրի **92.9%-ը**, մագիստրատուրայի **95.8%-ը**, թվով 247 շրջանավարտ: Այստեղ պետք է նշել, որ

շրջանավարտների **14%-ի** (34 ուսանող) ՄՈԳ-ը եղել է 18-20 միավոր, իսկ 27%-ինը՝ 13-17 (Ցուցանիշ 2.2):



5. Հիմնական դասախոսական կազմը վերջին 3 ուստարիների համար կայուն է՝ 82-ից 90: Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 3 ուսումնական տարիներին աճել է և 2021-22 ուստարում կազմել է դասախոսական կազմի **59%-ը:** 2021-22 ուստարում միայն մասնաճյուղում աշխատող հիմնական դասախոսները (**68** դասախոս) կազմել են ընդհանուր դասախոսական կազմի **39%**-ը: Ընդ որում, նրանց **43%**-ը՝ 29 դասախոս, գիտական աստիճանով է (Ցուցանիշ 2.3, 2.3.1):





6. Վերջին 3 տարիներին դասախոսների միջին տարեկան բեռնվածությունը բավարարում է սահմանված նորմերին՝ ոչ պակաս **700 ժամ**: Եվ դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը վերջին 3 տարիների համար կայուն է՝ 0.56-0.58 (Ցուցանիշներ 2.6, 2.12):

7. Ավելացել են նաև Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի գիտական գործունեության արդյունքները, միայն 2021-22 ուստարում նրանց կողմից հրատարակվել են **6** ուսումնամեթոդական ձեռնարկներ և դասագրքեր (նախորդ տարիների 1-ի փոխարեն) և **42** գիտական հոդվածներ: Ընդորում, 2021թ.-ին 1.5 անգամ մեծացել է 1 դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների ցուցանիշը՝ **0.74** (Ցուցանիշ 2.13, 5.3):

Ցուցանիշ 2.13	2017/18	2018/19	2019/20	2020/21	2021/22
Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը	1	10	1	1	**6**
Հիմնական դասախոսական կազմը	95	93	64	63	**68**
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.01**	**0.11**	**0.02**	**0.02**	**0.09**

8. Առաջադիմության ցուցանիշը՝ **71.9%,** ուսանողական հարցման արդյունքները-

<u>Բնագավառ 3.</u> Ռեսուրսներ և կառավարում

9. 2021թ.-ի մասնաճյուղի տարեկան բյուջեն 2020թ. համեմատ աճել է **12.2%**-ով և պետական բյուջեից եկամուտների հաշվեկշիռը տարեկան բյուջեում 2021թ.-ի կազմել է **30%:** Դրա մեջ հիմնականում իր ազդեցությունն ունի պետական բյուջեից հատկացումների ծավալի մեծացումը, որոշ չափով նաև տարեսկզբին ունեցած դրամական միջոցների առկայությունը: Պետական բյուջեից եկամուտները 2021թ.-ին աճել են պետությունից լրացուցիչ հատկացումների հաշվին՝ կապված 2020թ.-ի 44-օրյա պատերազմի հետ, մասնավորապես զոհված ազատամարտիկների երեխաների, պատերազմի մասնակից ծնող ունեցող ուսանողների և պատերազմի մասնակից ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ձևով (Ցուցանիշ 3.4)**:**

Նշենք, որ վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտների հաշվեկշիռը տարեկան բյուջեում 2021թ.-ին կազմել է **47.2%,** որը նախորդ տարվա համեմատ նվազել է ուսանողների թվի նվազման պատճառով:





9. Մասնաճյուղի ուսումնական ծախսերը 2020թ.-ի համեմատ աճել են **2.1%-ով** և տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը 2021թ.-ի համար կազմել է **49%:** Վերջին 2 տարիներին Մասնաճյուղը գումարներ է ծախսել նաև գիտահետազոտական աշխատանքների համար (Ցուցանիշ 3.8):



Ավելացել է նաև դասախոսական կազմի միջին աշխատավարձը և 2021թ.-ին այն կազմել է 230000 ՀՀ դրամ: Մասնաճյուղում **աշխատանքի վարձատրության** ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի **68%**-ը (Ցուցանիշներ 3.11, 3.12):

10. 2021թ.-ին ավելացել է նաև մեկ ուսանողին ընկնող տարեկան ծախսերի ծավալը և կազմել է **415.8** հզ.դրամ, որից ուսումնական ծախսեր՝ **202.8 հզ.դրամ**:

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ

11. 2021թ.-ին նախորդ 3 տարիների համեմատ էապես աճել են գրականության ձեռքբերման ծախսերը՝ **621000** ՀՀ դրամ, էապես աճել է տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը՝ **4199000**: Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսը նախորդ տարիների համեմատ էապես աճել է, ավելացել է նաև մեկ ուսանողին ընկնող ձեռքբերված սարքավորումների տարեկան արժեքը (Ցուցանիշներ 4.5, 4.8):



12. Նշենք, որ շահագործման ծախսերի ծավալը վերջին տարիների համար համեմատաբար կայուն է, նվազել է նաև տարեկան էներգածախսը և ջրածախսը (Ցուցանիշներ 4.7, 4.9, 4.10):

Բնագավառ 5. Գիտություն և նորարարություն

13. Մասնաճյուղում 2020-21 և 2021-22 ուստարիներին կազմակերպված ներքին դրամաշնորհային մրցույթների արդյունքում հետազոտական նախագծերում ընդգրկված են եղել **11 դասախոսներ** (հիմնական դասախոսական կազմի 16.2%-ը), **նաև 10 ուսանողներ** (Ցուցանիշներ 5.1, 5.5):

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն

14. Միայն 2021-22 ուստարում Մասնաճյուղը ստորագրել է շուրջ **46 հուշագրեր**, համաձայնագրեր ու պայմանագրեր, այդ թվում **3-ը**՝ միջազգային համագործակցության (Ռուսաստանի պետական մասնագիտական մանկավարժական համալսարանի (03.02.2022թ.) և ԱՄՆ Այովայի համալսարանի (20.12.21թ.) հետ, համաձայնագիր՝ Բարեկամության և ֆրանկո-հայկական փոխանակումների (AEFA) կազմակերպության հետ (02.10.2021թ.)):

Կնքվել են պրակտիկաների կազմակերպման 35 և քելեջների հետ համագործակցության 4 պայմանագրեր (Ցուցանիշ 6.4):



<u>Բնագավառներ 7.8.</u> Որակի ներքին ապահովում և Հասարակական պատասխանատվություն

15. 2021-22 ուստարում Մասնաճյուղում առաջին անգամ գործարկվել է կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը: Ուսումնական տարվա ընթացքում Մասնաճյուղի բակալավրի 20 և մագիստրոսի 1 կրթական ծրագրերից մշտադիտարկում են անցել բակալավրի 4 կրթական ծրագրեր. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Կիրառական արվեստ»:

Նշենք 2 կարևոր խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում մի շարք այլ արդյունքների վրա.

1. Վերջին տարիներին **<u>նվազում է</u>** ուսանողական համակազմը (2021-22 ուստարում՝ 1186 ուսանող), որում իր ազդեցությունն ունի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվի նվազումը, նաև մի քանի կրթական ծրագրերով վերջին տարիներին ընդունելություն չի կազմակերպվել (ԻԿՄ, ԲԲ, ՔԿԳ):

2. Ուսանողական համակազմի նվազման արդյունքում նվազել է վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը, հետևաբար նաև վճարովի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները: Այն 2021թ.-ին կազմել է արտաբյուջետային միջոցների ընդհանուր ծավալի 80.6%-ը (նախկին տարիներին՝ 87.0, 89.3, 90.8):

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին